

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԹԱԳՀԵՍ ՍՊԸ-ն ԷԱՃԱՊՁԲ-2024/16-20-ԵՊԲՀ ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում
Ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
100	HEALICOM HC209	HC209	HEALICOM MEDICAL EQUIPMENT CO.,LTD	Մեխանիկական ֆունկցիոնալ մահճակալ: Նորմալ ստանդարտ հիվանդասենյակների, անհետաձգելի բուժօգնության և վերակենդանացման բաժինների համար նախագծված մեխանիկական կառավարմամբ /MANUAL/, երկու սեկցիաներով մահճակալ, փոշեներկված, հիմնական հենքը պատրաստված է խիստ դիմացկուն հատվածավոր պողպատե խողովակներից կամ պողպատե շերտերից: Հանվող ABS պլաստիկ գլխամասի և ոտնամասի պատերով /PANEL/ սպիտակի և կապույտի համադրությամբ: Գլխային հատվածը բարձրանում է 0-75°: Գլխային հատվածի բարձրության կարգավորում մեխանիկական կառավարման եղանակով: Ունի 4 սեգմենտանի Ներքնակ, որը չի սահում և շատ ամուր հարմարեցված է մահճակալին: Ներքնակը ջրակայուն կտորից է:

				<p>Ներքնակի չափսերը՝ 2000x850x80 մմ (80 մմ սպունգ, խտությունը՝ 20 կգ/մ³): Ներքնակը ծալվում է մահճակալի այն հատվածի հետ, որի թեքությունը անհրաժեշտ է կարգավորել: Ներքնակն ունի անցքեր, որոնց շնորհիվ օդ է ներս թափանցվում, իսկ պառկելուց օդը արագ դուրս է մղվում: Անհրաժեշտության դեպքում կարելի է ներքնակից հանել կամ փոխարինել սպունգը: Մահճակալի ոտքերին ամրացված են՝ 4 x 125մմ տրամագծով երկշերտ անիվներ, 2-շառնիրային, միաժամանակյա արգելակումով: Ունի բամպերներ բոլոր 4 անկյուններում: Մահճակալի ընդհանուր չափսերը՝ երկարությունը 2160մմ; լայնությունը՝ 960 մմ ; բարձրությունը՝ 500 մմ: Մահճակալի և ներքնակի չափսերի թույլատրելի տատանումը $\pm 5\%$: Ունի շարժական շտատիվ՝ կարգավորվող բարձրությամբ 4 կախիչներով: Ունի այլումինե, ծալվող կողմնային բազրիքներ (գույգ): Ունի հարմարանք (ցանց) տարբեր բժշկական պարագաներ դնելու համար: Մահճակալի մետաղական հենքը սպիտակ է: Մահճակալի առավելագույն ծանրաբեռնվածությունը՝ 280 կգ: Մահճակալի քաշը 60կգ: Արտադրող ընկերության ISO certification: Նոր է, չօգտագործված: Առաջարկի արժեքի մեջ ներառված են տեղադրումը, կարգավորումները, օգտագործման եղանակներին ծանոթացնելը: Երաշխիքային ժամկետը տեղադրման պահից 12 ամիս:</p>
--	--	--	--	--

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО ТАГ ГЭМ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ЕЦДЦПР-2024/16-20-БПРЗ ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
100				